




9(47.525)


29348


9-81

Липкин, Г.

Шишкин (Башкир): 10к.








**ՅԵՆ. ՀՅԱԼԻՄ**

399

# **ՍԿԶԲՈՒՄ**

(Տուշեր)



**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1926 թ.**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՃ. ՄՈՑԻԱԼԵԱՍ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարիատի բոլոր յերկրների, միացե՛ք:

Գիրու դաշրիչ շի պրով

ՅԵՂ. ԶՈՒԲԱՐ

891.99

ՅԱՀՈՒԴԱՆ Տ 1961 թ.

# ՍԿ ԶԲՈՒՄ

(Հուշեր)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1926 թ.

Գրառեալ. № 384 Պ. № 1362. Պետհրատ. № 300. Տիր. 5,000

Պետհրատի IV սպարան Հենինականում

## ՍԿԶԲՈՒՄ

(Հուշեր)

Հայաստանի առաջին պարլամենտի «անդրանիկ խորհրդարան» Հ. Հ.» նախընտրական պալքարը վերջանում եր: Հաղթող դուրս եր գալիս դաշնակցությունը. մեծ ու փոքր դաշնակցականները ցնծում ելին, նրանց քեֆին քեֆ չեր հասնի: Մեր կուսակցությունն ընտրություններին չեր մասնակցել, իսկ «Սպարտակ» բանվորագյուղացիական յերիտասարդական կազմակերպությունը՝ վորոշել եր պարլամենտի բացման որը թուցիկ բաց թողնել՝ կորչի պարլամենտարիզմը, կեցցել Խորհրդային իշխանությունը, կեցցել պրոլետարիատի դիկտատուրան լոգունգով:

Այդպես ել արինք:

Կոչը գրեց ընկ. Աղասի Խանճյանը: Նշանակված որն ու ժամին մեր կոմիտեյում հավաքվեցինք, կարդացինք ու հաստատեցինք կոչը՝ Գրաշար ընկ. Գարեգինն իրեն հատուկ ճարպիկությամբ տպեց կոչը մի քանի հարյուր որինակ:

Ղուկասը մի մասն ուղարկեց զավառները, իսկ  
մեծ մասը կպցը ինք դիշերով Յերևանի գլխա-  
վոր փողոցներում ու պետական հաստատու-  
թյունների դռներին։ Ղուկասը խնդրեց, վոր Ե-  
րեն թողնենք պարլամենտի դռները զարդարելու։  
Այդ բավականությունից չզրկեցինք մեր բոլորին  
սիրելի Ղուկասին։ Առավոտյան սուսիկ - փուսիկ  
Ղուկասի հետ դուրս յեկանք տեսնելու, թե ի՞նչ  
գործ են տեսնում մեր թոռոցիկները։

Յերբ պարլամենտի դռան մոտով ելինք  
անցնում՝ ծիծաղս չկարողացա զսպել. մեր Ղու-  
կասը ծուռ խաչի ձեռվ կպցը եր մի տասը  
թոռոցիկ։ Ղուկասն ինքը ծիծաղը զսպելով, թե-  
վը կմշտեց ու աչքով արեց թե սուս արա։

Ամեն տեղ մեր թոռոցիկները զարմացած  
ընթերցողներ ելին հավաքել, սա ի՞նչ բան է,  
գժվել են ինչ է, սա ի՞նչ կազմակերպություն է՝  
յերիտաստրդների Սպարտակ միության Յերևա-  
նի կոմիտե։

«Անկախ Հայաստանը իր մեղրամիսն եր ապրում  
և հանկարծ ինչ-վոր «լակոտներ» մուռտառում են  
ազգային մարդկանց պայծառ արամադրությունը։

Ղանթարում դաշնակցական ագիտատորները  
գործի վրա ելին։ Նրանք գովաբանում ելին Ե-  
րեսց կուսակցությունն ու նրա հաղթանակը։  
Յերբ մի ես-եր ագիտատոր փորձեց իր զուռնան

ՓՀԵԼ, մառզերիստները ձեռաց նրա ձենը կտրեցին ու քշեցին Ղանթարից։

Ղանթարը դաշնակներին։

Իսկ մենք մեր գործն եյինք տեսնում. անաղմուկ սողոսկում եյինք ունկնդիրների մեջ. սրբանք հասարակ մարդիկ եյին, արհեստավորներ, քաղաք յեկած գյուղացիք. Վողևորություն չկար։ Ամեն մարդու ձեռք թոռւցիկ չես ճխտի. մարդու դեմքին նայիր, յերբ նա դաշնակցականի ճառ ելում, կըհասկանաս թե, կարելի՞ յե նրան տալ բալշշեվիկական թոռւցիկ։ Ղանթարի տակ կազմակերպվեց դաշնակցական թափոր ու զուռնաչիների առաջնորդությամբ շարժվեց դեպի դաշնակցության կոմիտեյի շենքը։ Մենք մեր թոռւցիկներով թափորի մեջն ենք։ Կոմիտեյի պատրշգամբից խոսում ե Սեպուհը մենք ու մեր թոռւցիկը զայրացրել ենք «աղգի պարծանք» խմբապետին, կայծ ու կրակ ե թափում նա «հայ ժողովրդի թշնամի լակոտների» գլխին, վորոնք (անշուշտ) «գործում են թուրքերի և ռուսների վոսկիներով»։

Իսկ մենք «աղգի դավաճան լակոտներս» թե լսում ենք զայրացած խմբապետների ճառը և թե շարունակում թոռւցիկներ բաժանելը։

Դա մեր կազմակերպության առաջին ինքնուրույն քաղաքական յելույթն եր. այդ հաշվի

առան թե մեր կուսակցական փոքրաթիվ ընկերները, թե դաշնակցական բյուրոն ու կառավարությունը:

Անվերջ դեղերտիք մնալ չես կարող, յերբ համարյա ամեն որ քաղաքում դեղերտիքներ են վորսում:

Մի որ ել ինձ բոնեցին ու տարան Յերեւանի զինվորական Պետի Վարչությունը: Թեպետ յես մի ժամանակ արտիլերիստ ելի յեղել և ընական ե, վոր հիմա ել ինձ արտիլերիայի տանելին, բայց արտիլերիստ աֆիցերը ինձ չըհամաձայնեց վերցնել:

— Ստուդենտ չեմ ուզում, ասեց ու ձեռք քաշեց ինձանից:

Գնացի զինվորական պետի մոտ, թե ի՞նչ կը համարմի անել:

Կարճահասակ, ճաղճպան անգույն աչքերով մի ոտոս զենուրալ եր պետը:

Գլուխը բարձրացրեց սեղանի թղթերից, ակնոցները քաշեց նեղլիկ ճակատին ու վոտիցո դուխ դիտելով բարկացած՝

— Գլխիս նստեք:

Անելիք բան չեր ասածը, դրա համար ել ձայն չհանեցի:

— Ո՞վ եք, ի՞նչ եք:

— Ուսանող եմ, Ռուսաստանից յեկած:

Ծերուկս այս անգամ միքիչ փափկած ձայնով հարցրեց թե վորտեղացի յեմ, յերբ եմ յեկել Ռուսաստանից:

—Իմ վորդիս ել Ռուսաստանումն ե, իմացը նա ինձ: Ծերուկը յերեխ կարոտել եր Ռուսաստանին, իր վորդուն:

—Ի՞նչ ծառայության մեջ եք Յերևանում:

—Պետական արխիվի համար գրքեր եցի հավաքում:

Իվանովը (այդպես եր գեներալի ազգը) քիչ մտածեց ու կարծես գյուտ անելով առաջարկեց ինձ մնալ իր վարչության մեջ իբրև գրադարանապետ ու իբրև կըտսեր գրագիր:

Լավ յեղավ, Յերևանում կըմնամ ընկերներին մոտիկ, թե չե ով գիտե, վոր շան ծակը կարող ելին ըշել:

Աղյուտանտը հրամանով ծառայության մեջ մտցրեց ինձ ու առաջարկեց շորերս ու անկողինը տեղափոխել վարչության սենյակներից մեկը, ուր գրագիրներն եյին ապրում:

Առավոտյան յերկար փնտուելուց հետո ադյուտանտը գտավ «գրադարանի» բանալին ու ինձ հանձնեց:

Գրադարան եմ ասում հա...

Պապուս տարվա մի պահարան, տարիների փոշիով ծածկված: Բաց արի ու քրքրեցի: Հար-

յուրի մոտ զինվորական կրօնական ու բարոյախոսական գրքեր, մի քանի հատոր արկածալին ոռմաններ։ Արևո վկա, ամենանոր գիրքը այստեղ 1904 թ. եր վերաբերվում, այդ թվականից հետո այս լույս ու գիտության պահարանը նոր գիրք չեր մտել։

Այնուամենայնիվ ծառայությունը՝ ծառայություն ե, վերջապես մի գործ պիտի անելի։ Միշտաթ ըեփով զբաղվեցի՝ գրքերը ցուցակագրեցի, համարակալեցի, դասավորեցի։

Ո՞վ պիտի աչք գցեր այդ պահարանի մեջը ինչ կար, վոր ինչ կարդացին, կամ կարդացողն ով եր։ Պահարանի ներքեւի աչքում՝ 1890 թ. վերաբերող զինվորական հրամանների տակ իրենց տեղ գտան մեր կարմիր բըռշյուրները։ Կավ գրադարանապետը ճոխացնում է իր գրադարանը։

Առավոտյան ժամը 7-ից սկսվում է մեր վարչության կյանքը։ Այդ ժամին 3 գրագիրներա արդեն նստած ենք մի մեծ սեղանի առաջ և մեր թղթերն ու «գործերն» ենք բաց անում։

Սկսում են դնալ մեծերը։

Գլուխդ նոր ես կոխել թղթերի մեջ, հանկարծ ականջիդ տակ տրաքվում ե.

— Встать. Смирно-о-о...

Կանչողը մեր ավագ գրագիրն եր. տեղիցդ վեր ես ցատկում ու ցից կանգնում, վոնց վոր ցից կուլ տված լինես։

Կատվի քայլերով անաղմուկ, փափուկ կոխելով իր կարճլիկ վոտների վրա, կողքե-կողք ներս և մտնում գեներալը, աչքի ծայրերով մեզ նայում և կարճ ցածրաձայն՝

— Յձրաւտվյայտե

Գցելով մեր ռեխին, անցնում իր սենյակը։  
Մի յերկու շաբաթ անցավ մինչև յես սովորեցի ժամանակին տեղիցս վեր ցատկել, ձեռներս „ու շվամ“ պահել, ցից կուլ տալ և պետին «աչքերով ուտել»։ Յեվ իմ անշնորքությունս եր պատճառը, վոր պետո մի վայրկյան ավելի յեր շնորհում մնալ մեր սենյակում, վորպեսզի բացի վողջույնի հայացքից՝ կշտամբական հայացք ել նետի հատկապես իմ և ավագ դրագրի կողմը, թե ինչանցու յես, վոր սրան դիսցիպլին չես սովորեցնում։

Նույնպես անաղմուկ, ինչպես իր տերը մանրիկ քայլերով, գնդակի նման զլորվելով ներս և վազում գեներալի շնիկը, գանգուր մազերով, վզին կապույտ ժապավեն։

Իմացած յեղեք, վոր հինգ րոպե չանցած դուք բախտ պիտի ունենաք տեսնելու գեներալի կնոջը և իր անբաժան շուկայի կողովը։

Ուրեմն ժամը 8-ն է։

Զանձրալի յեն անցնում են որերը, յերբ խմբով դեղերտիրներ չեն բերում։ Ամբողջ որը

զործ ունես թղթե մարդկանց հետ, զանազան ցուցակներ յես կազմում, սպաների, զինվորների, զորակոչից արտօնություն ստացող ծառայողների:

Լցվում ես ատելությամբ դեպի այդ «անփոխարինելի» «մասնագետները», վորոնք ազտապիտի ապրեն ու ման դան փողոցներում, իսկ դու «իշխ նահատակ» լինես:

Բայց ապա խումբ-խումբ ներս են բերում ու վարչության բակը լցնում դեղերտիրներին: Սրանք ել չեն ուզում «իշխ նահատակ» լինել: Գյուղացի դեղերտիրներ:

Սրանք իրենց հետ բերում են խոնարհություն ճակատագրին, ծուլություն, ապատիա, վալաս ու վոջին: Իրենց ամբողջ այս եռթյամբ նրանք նստում ենին, ձգվում, բրդում պատի ստվերի տակ ու սպասում, սպասում մինչև «կամիսոր» դա իրենց բախտը վորոշի:

Գալիս ե «կամիսոր», նստում պատշաճում դրված սեղանի շուրջը: Մեր ստարշին հրամայում ե.

— Խուժան, ոչերեղ կանգնի, շնոր, պո դվա «Խուժանը» բարձրանում ե ծուլլ, մեծ դըմքարություններով զուլղ-զուլղ կանգնում ե առանց շտապելու մոտենում որհաստական սեղանին: Ուրիշ բան են քաղաքացի դեղերտիրները:

Սրանք մեծ մասամբ տաճկահայեր են, «վանեցիներ»:

Յերևանցի քաղաքացի շան քիչ կըտեսնես գեղերտիրների մեջ:

Բոնվածներն ել ճանապարհին հալչում են մինչև մեր «վոյինսկու» ձեռքն ընկնելը։ Ծանոթ աֆիցերները հո քնած չեն—ընկերությունն ու խնամիությունն իր զործը տեսնում եւ:

Քաղաքացի գեղերտիրն աշխատում եւ սպառշգամբին ու սանդուղքներին մոտ մնալ, դեռ մինչև կամիսիան գալը քաղաքացի գեղերտիրը իր վկայականը ձեռին ու լեզուն միշտ սարքած՝ այս կամ այն գրագրի կամ աշխատակից սպային ե գիտում.

— Թյուրիմացություն ե, ազատեցեք։

Իսկ յերբ կամիսիան սկսում ե աշխատել, սեղանին առաջինը կըմոտենան «թյուրիմացության այդ զոհերը»։

Աչքդ կըկոխեն մի տասնյակ վկայականներ, ծննդականներ ևալն։

Կար վկայականների մի տեսակ, վոր վարկարեկված եր մեր կամիսիայի, հատկապես վոյինսկու աչքում—դա արևմտահայ խորհուրդներից ու արևմտահայ հայրենակցական միություններից արված վկայականներն ելին։ Դրանք մեծ մասմբ կեղծում ելին արևմտահայերի հասակը։

Մեր վոլինսկին զզվում եր թե այդ վկա-  
յականներից և թե մանավանդ նրանց տերերից  
Յեվ չեր ել թաղցնում իր զզվանքն ու ատելու-  
թյունը։

— Յերիտասարդ պարոն, դիմում եր նա քա-  
ղաքացի դեղերտիրին ու կողքին նստած դարա-  
բաղցի արդյուտանտին աշխով անում՝ թե թարգ-  
մանի — յերիտասարդ պարոն, դու քաղաքացի յես,  
ինքդ ել տաճկահայ, դու պիտի հասկանաս, վոր  
քո հայրենիքը պաշտպանելու համար զորք ե պա-  
հանջվում, զորքն ել հո զինվորներից ե կազմը-  
վում, զինվորական շորերից խրտվիլակներ չենք  
ուղարկելու մեր գնդերը։ Ինչու յես փախչում  
քո պարտականությունիցդ, ախր ենքան զոհեր  
են տրված, ինչու համար՝ Տաճհայաստանը ազատ-  
վի, հիմա ել զոհեր են պետք, վոր հայ ժողո-  
վրդի դարավոր թշնամուց այս պետության սահ-  
մանները պաշտպանենք։

— Перышка с вас не оставят, — **վերջացնում**  
**եր նա իր ցիցերոնյան ճառը։**

— Ադա քյոփոյողու, ասըմ ա գեներալը,  
թարգմանում եր արդյուտանտը, իսե դյուք ձեռ-  
քը առել ձեր կառավարությունը — իսի մեր դա-  
րաբաղցի տղերք պիտի կոտորվեն վանիցեների,  
յերևանցիների համար, շուն-շան վորդիք, իսի սալ-  
դատ չեք քինում, ձեր դյուքաններում, կնանոց  
ծոցում պահ եք գյալի։

Քաղաքական ազիտացիոն ճառ ասելն իհարկե  
չեր մտնում մեր վոլինսկու պարտականու-  
թյունների մեջ այնպես, ինչպես նա ինքն  
եր հասկանում իր պարտականությունը։ Հին  
ձուլվածքի մարդ եր նա. իբրև պրապորշիկ նա  
մասնակցել եր Ղարսի գրավմանը 1877 ուս-  
տաճկական պատերազմի ժամանակ, իսկ շուրջ  
քսան տարի՝ զինվորական պետ Անդրկովկասի  
զանազան քաղաքներում։ Առաջ նա զիտեր,  
վոր տարվա վորոշ ժամանակին իրեն կըներկա-  
յանան վորոշ թվով զինվորացուներ. ինքը նը-  
րանց կըջոկի ըստ հասակի, կազմվածքի, առող-  
ջության՝ սրան արտիլերիա, նրան հետևակ,  
մյուսին ձիավոր՝ կավալերիստ կամ գրենացիոր և  
պրծավ գնաց, զիտեր, վոր սուս ու փուս ամեն  
մեկն իր տեղը կըգնա։

Քաղաքացիներին ել ուղարկում ելին գնդե-  
րը, բայց միքանի որ չանցած՝ տեսար եղ զե-  
զերտիրը՝ վոլթա ե տալիս բուլվարում, կամ  
կանգնած եր դուքանում արհամարհանքով նա-  
յում ե ըեղ—թե՝

—Կերածք, բռնեցի՞ք, սալդատ տարածք։

Վորեւե արևմտահայ գործիչ ազատել ե նը-  
րան։ Այդպես ել իմացած յեղեք։

Իսկ հիմա կառավարություն ել կարծես  
թե կա, զինվորական մինիստր ել կա, հրաման-

ներ ե տալիս, ինքը վոյինսոկին ել արդեն զեներալ ե դաշնակցական կառավարության կամոք (հրամանով № 1020), բայց ես ժողովուրդը հրաման-մրաման չգիտի, և խեղճ զեներալս ստիպված ե մարդկանց հասկանալի ճշմարտություն հասկացնել՝ վոր քաղաքացին իր հայրենիքը պաշտպանելու համար բնականաբար զինվոր պիտի գնա:

Գեներալության քաղցրությունը ել են չե, ծառայությունն ել՝ հեչ:

Իսկ ժողովուրդը, զինվորները...

—Առաջ ել զյուղացիներ կային, զինվոր եին զալիս ահա—կրծքները՝ սաժեն, փորձում եր սաժենաչափ պարզել իր կարճ ձեռները զեներալը, ամուր, վոնց վոր քար (զեներալը սեղմում ե իր փոքրիկ բոունցքները և կտրիճի արտահայտություն տալիս եր անգույն կատվի աչքերին): Իսկ հիմա ճանձ ե, ժողովուրդ չե, անհուսալի յեզրակացնում ե զեներալը, յերբ վերջացնում եր նիհար, սովալլուկ, կեղտոտ փալասներով իրենց մերկությունը ծածկած զյուղացի ների քննությունը:

—Վոչ մի արտիլերիստ, վոչ մի կավալերիստ, զրենացչոր հո 'չկա ու չկա, նորոգում եր իր դարդերը դժբախտ զեներալը:

Վայ են զորքին, ափսոս են հացին, անտակ

տակառ ե, զորք չե, մի կողմից լեցնում են՝  
մյուս կողմից դուրս թափվում, յերեք դեղեր-  
տիր, եսոր զինվոր, վաղը նորից դեզերտիր...

\* \* \*

Քաղաքացին ակումբի դռնից, վոր մտնես՝  
ձախ մի գնա, գնա ուղիղ, հիտո ձախ, բարձրա-  
ցիր փայտե խարխուլ սանդուխներով — դլուխդ  
ցած պահիր ու մեջքդ ծոիր, թե չե քիթդ ու  
ճակատդ քնքուշ կշունեն գաղթականների կախ  
տված հոտավետ լվացքները։ Պատշգամբի ծայ-  
րում մտիր դռնից առանց թակելու. կիսամութ  
սենյակ. առաջ կրտեսնես մի տախտակե սեղան,  
աչքերդ, վոր մթին ընտելանան՝ կրտեսնես մի  
պահարան, մի նեղ փայտե նստարան սեղանի ա-  
ռաջ և թախտ անկյունում. կեղտոտ ու պատա-  
ռոտած պաստառներ, վորոնց վրա կրտեսնես փայ-  
տոճիրների դեմ մղված արյունահեղ կովի հետ-  
քերը։ Սա «Սպարտակի» կոմիտեն ե, ակումբը,  
ավարախանան, նայած որին և որվա ժամին։ Այս  
սենյակից մի գուռ տանում և հետեւյալ սենյակը,  
սա կատարյալ պալատ ե առաջինի հետ համե-  
մատած, վորովինետե մի պատուհան ունի, վոր  
նայում ե գեղի հավաքունի կտուրը, մի քայլ  
բարձրություն ե պատուհանից մինչև կտուրը։  
Սա մեր ամառանոցն է։ Այս սենյակում ապրում  
են յերկու սպարտական ընկեր իրենց գրքերով

շրջապատված ու անհավասար պայքար մղելով  
գիշեր ու ցերեկ փայտոճիլների, մոծակների և  
մեղ հեա, վորովինետե մենք ել նրանց հանգիստ  
չենք տալիս մեր տարածամ այցելություններով։  
Ով անտեր անտուն ե, գալիս մտնում ե տղաների  
սենյակը, գրքերը տակն ու վրա անում, ուզածը  
վերցնում, հանգիստ պառկում նրա տեղերում ու  
փառավոր խոմփացնում, մինչ ծառայությունից  
հոգնած վերադարձած տանտերը չի իմանում ուր  
պառկի։ Յեթե ուտելիք կա, յեռթը կողպեքի տակ  
պիտի պահես։

*«Սպարտակյաններս» կենցաղալին տեսա-  
կետից յերկուսի յելինք բաժանվում—տեղացիներ  
և յերեանցիներ. Մուշեղ Զալյան, Բանահյանը և  
յես յեկվորներ ելինք ու տեղացիների վորակու-  
մով» «բասյակներ»։ Մեզ միացնում ելին այդ տե-  
սակետից և «Բաբաշկալին»՝ յերեանցի աղջիկ ընկ.  
Բաբայանին։*

Մանչ-աղջիկ եր։ Մյուս ընկերները հին  
ծանոթներ ունելին բաղաքում, տուն-բարեկամ,  
աղջական։ Մենք յեկվորներս մեղ հետ բերել ել-  
ինք Բագվից ու Ռուսաստանից ոռոսական հեղա-  
փոխության տված «ռազմախը» կենցաղալիննիստ  
ու կացում, բարքերում և ոռոսական ստեպների  
յերգերը։ Տեղացիները նեղանում ելին մեղանից  
յերբ մեր ռազմախը» չափից անցնում եր ու շո-

շափում նրանց տեղերն ու իրերը, բայց նրանք և  
սիրում ելին մեզ, և մի տեսակ հարգում, վորով-  
հետեւ հեղափոխական յերկրից յելինք-յեկել. կա-  
ըստագին հիացմունքով լսում ելին Մուշեղ Զա-  
լյանին, յերբ նա իր սքանչելի տեսորով ռուս ժո-  
ղովրդական յերգեր եր յերգում Հայաստանի սահ-  
մաններից յերբեք վոտ դուրս չդրած ընկերնե-  
րի շրջանում Այդ յերգերից մեկը գիտեր և յուրա-  
տեսակ վարիացիաներով ու հայկական ակցենտով  
յերգում եր. և մեր սիրելի Ղուղասը. Ստենյկա Ռա-  
զինի յերգն եր դա.

Есть на Волге утес.

Диким мохом оброс...

A 6956 — Հը, Ղուկաս, Մոսկովում ի՞նչ տեսար, ձեռք  
ելինք առնում Ղուկասին հաճախ, յերբ նա վեր-  
ջացնում եր իր յերգը:

Ղուկասն ել մեր ընկերներից շատերի նման  
ամբողջ հոգով ձգտում եր խորհրդային Ռուսաս-  
տան. Միքանի շաբաթ առաջ նա փախել եր Թիֆ-  
ֆող, վոր այնտեղից Մոսկվա անցներ, բայց  
Յերկրային Կովկասյան Կոմիտեն Ղուկասիս գը-  
լուխը նորից դեպի Յերևան եր շուռ տվել: Ղու-  
կասն անփոխարինելի յեր Հայաստանի մեր կազ-  
մակերպության համար, իբրև հմուտ կազմակեր-  
պիչ, ուժեղ կամքի տեր և խիստ կոնսպիրատոր:  
Նրան թվում եր, վոր ինքն իր հեղափոխական

Եներգիային կարող ե՞լիք տալ միայն խորհրդացին Ռուսաստանում։ Նա կարոտ եր պրոլետարիատի քաղաքացիական կովի։ Ինքը բնիկ յերեւանցի, թեմականի սան, աղքատ ընտանիքի զավակ՝ ամբողջ կյանքը Յերևանում անցկացրած՝ նա անտակ, սուրսայր ատելությունն ուներ դեպի հայ սեմինարիզմը, վարժապետիզմն ու մեշտականությունը։

Սպանեցիր՝ նա չեր համաձայնի մանել տշակերտական ճաշարան, ուր մեծ մասամբ դաշնակցական աշակերտությունն եր հավաքվում, չեր անցնի բուլվարում թրե յեկող դաշնակցական, մառզերիստական, աֆիցերական-պարլամենտական վոհմակի միջով։ Թվում եր, վոր Ղուկասը նրանց մեջ կըմտնի միայն հեղափոխական դատաստան կատարելու, իսկ քանի դրա ժամանակը չի հասել, քանի ուժը չեր հասնում Ղուկասը խունացած կապույտ բլուզը հագին, մաշված կեպկան լոթիավարի գլխին դրած, ծնկներն ուռած գորշ շալվարով, վոտներին հասարակ չուստամտազբաղ, յերբեմն հեղնական հայացքներ նետելով կկոցուն աչքերին մենակ կամ մեղանից մեկ յերկուսի հետ անցնում եր Աբովյանով։ Անողոք եր ընկերների թուլությունների, ինչպես հիմակասեցին՝ թեքումների հանգեց, սուր հեգնող, բայց եւ ընկերասեր, պարզ ու շիտակ։

Աղքատիկ կոպեկներ եր հավաքում, վորքու-  
կինիստից ընագիտական և գլխավորապես աստղա-  
գիտական գրքեր առնի:

Արմենակը (Բուդաղյանը) ավելի տեսական  
թեքում ուներ և սիրում եր վիճել ուրիշ կուսակ-  
ցությունների յերիտասարդների հետ:

Հիշում եմ՝ ինչպիսի ուրախությամբ ու հետա-  
քրքրությամբ մենակ մի որ ժողովի հավաքվեցինք  
մեր Կոմիտեյում։ Խորհրդավին Ռուսաստանից  
յերեք ընկեր ելին յեկել և զեկուցում պիտի տա-  
յին մեր խմբակում։ Վերջապես «այնտեղից» յե-  
կած ընկեր պիտի տեսնելինք։

Դժբախտաբար մեր վողեորության փուքը  
շատ շուտ իջավ վորովիետե ընկերները համարյա-  
վոչինչ չկարողացան պատմել և մեր հետաքրքրու-  
թյունը լուրջ բացատրություններով բավարարել։  
Համա ատեցինք յեկածներին, մանավանդ վոր  
նրանցից յերկուսն ել աղջկերք ելին ու բավա-  
կան զարդարված։ Այս վերջին հանգամանքն ար-  
դեն ավելորդ պատճառ եր, վորպեսզի Ղուկաս  
անողոքը նրանց անարժան համարեր պրոլետա-  
րական հեղափոխության յերկրի ողն իսկ շնչելու։

## Հ-րդ ԹՌՈՒՑԻԿԸ

Թուուցիկները յերեկոյան ժամը 10-ին Ղու-  
կասն ու գրաշար Գարեգինը բերին Կոմիտե։ Աղ-

Զիւրքն արդեն շրեշը պատրաստել ելին. Նրանք  
հաղիվ թե իրենց աներու զաթալի համար այնողիսի  
վողերությամբ լուզ և ալյուր խառնած լինելին,  
ինչու վոր այն զիշեր ջուր և ալյուր խառնեցին  
մեր հեղափոխական լավաշների — թուցիկների  
համար. Բարաշկան ուղղուկի գժվում եր, վողերու-  
թյանից նրա դնչիկը ըրտնել եր, ձանչի չուրը  
ճոկտախն կողեւ, բոլոր աղջկերքն ել զոշաղ ընկեր-  
ներ ելին յերեւմ այդ զիշեր:

Կոմիտեն Դուկասի գլխավորությամբ ընկեր-  
ների մեջ բաշխեց վոլոցներն ու հիմնարկու-  
թյանները: Ժամկը 12-ից հետո, շրեշի բանկա-  
ները մեկի ձեռքը, թուցիկները մյուսի՝ զուզ-  
զուղ ցրվեցինք մեր կվարտախները:

Փողոցներն արդեն մեռել ելին, համ ու կենզ  
մարդիկ ելին պատահում կլուրից վերապահալիս  
— Շատ շուրջի շանեք, հա, խրառում եր  
Դուկասը զուզերին, մենակ, վոր շատ նեղն ընկ-  
նեք, սիլի-բիլի տվեր ձեզ: Գիշերն այնքան ել  
բարեհաջող չեր թուցիկներ կողցներու պարզնելա-  
րանկա զիշեր եր, բայց կոնսոլիրացիալի համար  
բավ եր զա, լուսնակ զիշերին՝ զուզեր, մաս կա-  
կածը ոլիտի զարթեցներ:

Հենց վոր նկառում ելինք մեզ մոտեցող  
մարդ կամ խումբ՝ խոկական սիրտահարի քայլածքը  
ու զիշք ելինք ընկառում:

Իսձ ու Յարաշկալին վիճակինեւ եք թոռցիկը  
կողցնել Անգլիական զնողագետի շտարի զանը:

Դժվար զործ եք զայ վորովինեւ շտարի զրո-  
ներին մշտական անողակաս ելին յերկու խոժո-  
սողեւ հինգուս որահակներ:

— Ազա, վոնց պիտի անենք, կորած ենք,  
մեռած բան ո, կրկնուծ եք Յարաշկան, բանի մո-  
տենուծ ելինք Անգլիական շտարին, վորոեղ այ-  
ժբ Զեկան եւ:

Գտուծ ելինք փողոցի սովերոտ կողմով Հան-  
կարծ մի ֆայտն անցավ. բաղաքի կոմենդու-  
Շախմթունին եք վերադասնուծ կլուրից: Դար-  
բասում թողնվեցինք ու աղասեցինք մինչև Շա-  
խմթունին իք տուն մտնի:

Անգլիական շտարի անկյունին չհասած թը-  
ռուցիկի սպիտակ յերեսը շրեշեցինք. յես վեր-  
ցրի թոռցիկն աջ ձեռքս ու նույն ալդ ձեռքովս  
փաթաթվեցի Մարովի մեջքին ու այսպես զլուխ-  
ուիսի զիշերալին սիրահար զուզերի նման որոր-  
վող քաղերով ուղղվեցինք զեզի Անգլիական շտա-  
րի զուոր, միշտ պատին մոտիկ քաղերով:

Ժամի 2-ի մատ բոլոր զուզերն եւ վերադար-  
ձան զատարկ ձեռներով ու վոզերությունը  
լի. ամենքն եւ ամեն տեղ անփորձանք կողցրել  
ելին թոռցիկները: Յերեխի զրա համար եք, վոր-

**այն զիշեր տէնքան հոգարտ եր հնչում Մուշեղի  
տենորը.**

Сбейте а-коо-вы,  
Дайте мне волю,  
Я научу вас свободу любить...

**Գիշերն անցնում եր, բայց դեռ մենք չելինք  
ուզում ցրվել, խոսում ելինք, յերազում, պատկե-  
րացնում կոմիկ ձևերով, թե ինչողի պիտի շամեն  
առավույն դաշնակցական ջոջերն ու լակու-  
ները:**

**Շատ յերգեցինք մենք այն զիշեր։ Խոսարա-  
ցին յես ու Ղուկասը մեր մեջ վորոշեցինք, վոր  
մի բան մոռացել ենք անել, վերցրինք մի յերկո-  
տասնյակ թռուցիկ և ուղղվեցինք դեսի այն թաղը,  
ուր զինվորական հաստատություններն ելին ու  
կազարմաները։**

**Շտարի մոտով անցնելիս նկատեցինք վոր  
պահապանը անվրդով խոմփացնում ե քարին նրո-  
տած, հրացանը ծնկների մեջ տոտած։ Ղուկասը  
թռուցիկն անցկացրեց խշտիկի վրա և անցանք։**

**Անցնում ենք կազարմաների վաճակապատ  
պատուհանների տակով, այնտեղից զալիս ե զին-  
վորական քրտինքի հոտ և աններդաշնակ վաղոր-  
դալին խոմփոց։ ամեն պատուհանից մի-մի թը-  
ռուցիկ ենք ներս ճխտում ու անցնում։ մի տեղ  
միայն զինվորը հոնիկարծ զարթնեց ու զարտ-**

ցած մրժմոթաց, կարծելով վոր մենք ուզում  
ենք նրա կազմականի փաթթոցները (արմոտիկի)  
թոցնելու պատուհանից:

Դուկասը զնաց տուն քնելու, յես յեկա մեր  
դինվորական պետի վարչությունը և մուտքի  
դռան յերկու կողմերում մի-մի թոռոցիկ կողմե-  
րոց հետո պարտքս լիովին կատարած համարե-  
լով յերջանիկ հոգնածությամբ քնեցի զբաղիքնե-  
րիս ննջարանում անդոշակ թախտի վրա:

Մեր թոռոցիկը ոռոմքի պես պայթեց գաշ-  
նակցականների դիմին. Առ առաջին նախա-  
զգուշացումն եր, զլուխ բարձրացնող «ներքին  
վտանգը»: Մինչե այդ գաշնակցականներն այն  
համոզմունքն ունեին, վոր բայց իիզմը Հայաստա-  
նին չի կոչչի և յերջանիկ ելին իրենց այդ միա-  
միտ համոզմունքից: Հայաստանում ապրող հատ-  
ու կենդ բայց իիկները դաշնակցականների համար  
անվնաս յերազողներ ելին. բայց իիկների հետ  
հանդիպելիս լոթիավարի զրուցի եյին բոնում և  
վեհանձն ներողամտությամբ ասում՝ լավ աղերը  
եք: Մենք գաշնակցականների աչքում մի տե-  
սակ ընտանի անվնաս դարձած զազաններ ելինք  
Յեվ հանկարծ այդ զազանը իր ժանիքն և ցուց  
տալիս ու ճանդերը բաց անում:

Դաշնակցական մինիստրները չելին ուզում  
հիասթափվել «խելոք» հայ բայց իիկներից. ուզում:

Ելին իրենց մխիթարել, վոր թոռոցիկը «գիտակից» ու «լուրջ» բայլշեկուների ձեռքի դործը չե։ Դրա համար ել իսկույն և եթնրանց ախրանկալայի պետ բեմական ոֆիցեր Շախաթունին բարձր պատիվ ե անում իր սեփական կառքով այցելում ընկ. Արշավիր Մելիքանին և հարցնում թե ով ե թոռոցիկի հեղինակը։ Ընկ. Արշավիրն ի հարկե չքմեղանում ե, թե դա բայլշեկուների դործը չե։

Դաշնակցական կառավարության ամբողջ զայրույթն ուղղվում ե «Սպարտակ» կոչված «գիմնազիստ աշակերտ, անմուրուս լակոտների» դեմ։ Սակայն դաշնակցական ժանդարմապետ Գյուլիսանդանյանը չի դատարում «իսկական» հեղինակներին փնտռելուց և... դտնում է։

Այն որը, յերբ պատերին կպցրած մեր թոռոցիկները գոչում ելին՝ «կորչի դաշնակցությունը, կորչեն ազգայնական, շովինիստական հանրապետությունները, կեցցեն Անդրկովկասի Խորհրդային Հանրապետությունը և Խորհրդային Ռուսաստանը», հենց այդ որվա յերեկոն դաշնակցական պարլամենտի նիստն եր։ Նիստի կեսը մոտեցած կը իներ, յերբ միքանի ընկերներով վորոշեցինք ներս մտնել, դաշնակցական պարլամենտի տրամադրությունը հոտոտելու։ Մենք ել մոտեցանք դոանը, տեսանք Ներքին գործերի մինիստր

Գյուլխանդանյանը դռանը կանգնած, յերկու մասուցերիստ ել հետը։ Մենք իրար աչքով արինք՝ դաշնակցական պարլամենտի դռանն արդեն լավ հոտ չի փչում։ Դոնից դուրս յեկան թևանցուկ մի մարդ և մի կին. հանգիստ զրուցում ելին։ Գյուլխանդանյանը կտրեց նրանց ճանապարհը.

— Պարոն Սահակյան, դուք ձերբակալված եք. հետեւեցեք ինձ։

«Պարոն» Սահակյանը շշմած, խոսք ել չկարողացավ ասել. դաշնակցական մինիստրը, վորայդ ըոպելին կատարելապես իր դերումն եր իբրև ժանդարմապետ, առաջնորդեց ձերբակալված զուցին կամենդատուրա։

— Տղերք, փսփսաց մերոնցից մեկը, ձերբակալվածը մեր նոր յեկած ընկեր Մարտին Սահակյանն ե. սկսվում ե...

Հանկարծ հիշեցինք, վոր Ղուկասը պարլամենտի նիստի վերջը մոտենալիս բալկոնից թռուցիկներ պիտի ցրեր պատգամավորների գլխին։ Շնչակտուր վերև վազեցինք բալկոն, վոր նրան յետ կանգնեցնենք այդ քայլից. բոլոր նշաններն այն ելին ասում, վոր պարլամենտի անկյուններում այդ յերեկո պահակների ու մասուցերիստ շպիկների պակաս չեր զգացվում։ Ղուկասը բլուզի տակ ծոցը լիքը թռուցկներով արդեն պատրաստվում եր իր գործը տեսնելու. հազիվ համո-

զեցինք, վոր յետ կանգնի իր խիզախ քամից·  
չելինք ուզում, վոր յերկու վոտով թակարդն ընկնի:

Ուշ գիշերով վերադարձա քնելու. սենյակում  
գրագիր ընկերներս Ղամարլվից բերած մաճառ  
ելին խմում, բեֆ անում։ Բաժակ-բաժակի յետե-  
վից՝ ինձ ել տարավ քեֆի հոսանքը։

— Դուան վրա քու հունարն ա... լավ, լավ,  
գիտենք, փսփսում եր ականջիս գրագիր Արմե-  
նակը, ուսիս խփելով։ Յաման եք, հա... Աֆի-  
ցերները կատադած են. վոր ձեռքերն ընկնեք...

— Տղերք, խմենք են մարդկանց կենացը, վոր  
լավ բան ե ուզում և մի խոսքով...

— Խմենք սոցիալիստների կենացը, գոռաց  
ավագ գրագիրը։

Նրա յեղբայրը սոցիալիստ-հեղափոխական  
եր, ինքն ել եղ ջուռա մի բան։

Ալլահվերդին ինձ մոտ եր։

Քեֆը դիսկուսիա չե։ Խմեցինք։

— Զուբար ջան, հոգուդ դուրբան, մի՛ պար-  
ծենա թե մենակ դու յես եղ գործի յետնից գը-  
նում, յես ավելի աշխատավոր եմ, հերս ել, պապս  
ել, պապիս պապն ել ուանշպարներ են յեղել—  
թամուզ աշխատավոր։ Քու մորդ թուրքը մորթել  
ե, թուրքը քըոջդ տարել ե—չե։ Ռաստովից յե-  
կել, հեշտ-հեշտ խոսում ես, քարոզում. ախը յես  
վո՞նց յեղբայրանամ թուրքի հետ...

Մաճառն ու արյունը գլխին ելին խփել,  
ձեռքն ել սեղանին խփեց:

Տրագեդիա, հրդեհ:

— Զուր ածենք: Չե, հրդեհի դեմ հրդեհ:

— Դու գաղանի պես ես դատում, յեթե ի-  
հարկե գաղանը դատողություն ունի. Թուրքը  
հային ե մորթել, հայը թուրքին ե մորթել, նո-  
րից թուրքը հային ե մորթում, հայն ել՝ թուրքին:  
Յեղանգ: Մինչև յերբ պետք ե վայրենի գաղան-  
ների նման ամեն քարի, ամեն թփի յետեսից հայն  
ու թուրքը իրար վրա հարձակվեն. դրա  
վերջը չի լինի, յեթե մի ըոպե չմտածենք, թե  
ով և ի՞նչ պատճառներով ազգերին իրար ե թշշ-  
նամացնում, կոտորել տալիս: Մաքրիր աչքերիդ  
արյունը և դու ել կրտեսնես այդ:

Յեվ վիճում ելինք մինչև առավոտ:

Կողքի սենյակում բնակվում եր մեր սպա  
Գոգոլեր: Նրա ամբողջ մարմինը, իր կեցվածքով  
ոռւսական հարցական նշանն եր հիշեցնում: Ուղ-  
ղվում եր այդ նշանը միայն գեներալի առաջ և  
մեջքից կես լինում՝ գործավարուհու առաջ:

Պարապմունքներից հետո նա ամեն իրիկուն  
վերադառնում եր իր սենյակը, լուռ և մռայլ:  
Դուռը կողպում եր ներսից և շարունակում իւր-  
մել մենակ: Կամաց-կամաց իրար յետեսից տիրոջ

մարմնից բաժանվում ելին կետերը, կոշիկները.  
հետո շալվարը, շապիկը...

Ստոպ...

Մնաց փոխանը:

Յեվ այդպես ել քնում եր Գոգոլիը, գլուխը  
սեղանին դրած... Անվնաս ալգոհոլիկ եր:

Բայց այս գիշեր սատանան նրա փորն եր  
մտել...

Նրա սենյակից լսվեց ջարդվող շախ ձայն,  
բռունցքի հարվածներ սեղանին, պատին,—իսկ  
հետո...

Մեր գուռը շրիկալի բացվեց ու պատկեր—  
Գոգոլիը մերկ, մեկ հարցական, մեկ բացա-  
կանչական նշան դառնալով, մերկ թութը ձեռին  
մոնչում ե.

Убью, зарежу большевиков...

Տղերքը վեր թռան, գրկեցին հերոսին ու տա-  
րան իր սենյակը:

Հետո իմացանք վորնախքան մեր սենյակն ար-  
շավելը նա զինվորներից մեկին գաղանաբար թա-  
կել եր կոշիկի կրունկներով:

Սկսվեց առավոտյան սովորական գրասենե-  
կալին կյանքը:

Վորոշ ժամին տեղերնիցո ցից կուլ տվինք,  
վրայից ել գեներալի «զdravstvuyte»-ն անուշ ա-  
րինք և հետո քթերնիս կոխեցինք մեր թղթերի մեջ:

Աղյուտանտը միքանի անդամ անցնում գլուխում եր իմ առջեից, բան պետք յեղավ, գնացի մոտը:

Աչքը վախվիսելով գեներալի դռանը զցելով, քթի տակ, վոր մյուսներն ել չլսեն, տված թրդիս տողերին նայելով.

Ադա, քյոփողլու, հենց մեր դռանը պիտի փեշատեցիր եղ վոեղնի թուղթը. յանի հինչ ա ձեր պոազոամը, հինչ ըք ուզում մեզանա, ծառայություն ա, գոլցոխ ընք պահում, ոզը ըք ստեղ ել տռառամը քցիք, գեներալ աղյուտանտ, պիսը հավըսարացնիք։ Տայուզներ...

Կեսորվա դեմ գեներալն ել արտահայտվեց։

Առավոտուց պատշգամբի տակ հովում սպասում եցին—տասներկու զինվոր։ «Գերմանուպրլենիցն եցին յեկել։ Այդ մասին մեզ զեկուցեց մեր սաժենահասակ չոփուռ Փելդֆեքելը, վոր ինքն ել Գերմանի պլենիցն եր։

Տիպ եր. սկզբում յես նրա վորոշ հույսեր դնում եցի մեր կողմը քաշելու. զուր։ Նրա ամբողջ իդեալը գերմանացի փողոցային պոռնիկներն եցին. նրանց մասին դիտուն Փելդֆեքելը ժամերով կըխոսեր. գերմաներենը, ոռւսերենն ու Ղամարլվի բարբառն իրար խառնելով։

Կեսորին գեներալը պատշգամբից անցնելով նկատեց պլեններին։

— Աս ի՞նչ մարդիկ են:

— Կամիսիալի յեն սպասում, պարոն գեներալ:

— Սրանց ինչացու ե կամիսիան, քեզ ե, սալդաթ չեն, կանչեցեք եստեղ և իսկույն նշանակեք արտիլերիա:

Ռազմագերիները յեկան և հիանալի կարգով շարվեցին գեներալի առաջ:

— Յես շատ ուրախ եմ ձեզ տեսնելով, դուք ամեն մի զորամասի զարդը կարող եք լինել, Դիմեց նրանց գեներալը: Զեզ կըցուցակագրենք և անմիջապես կուղարկենք բատարեյա:

Տղերքն իսկապես շախով զինվորներ ելին— առողջ, կարմրաթուշ, լավ հագնված և հին զինվորական պրոբի:

Նրանք մի ըոպե իրար յերես նայեցին, ապա հայացքներով մեկին մի քայլ առաջ քշեցին:

Պատվի վերցնելով՝ ձեռքը գլխարկին, այդ մեկն սկսեց.

— Պարոն գեներալ, մենք խնդրում ենք մեզ չպահել. թույլ տվեք մեր տները գնալ, ութ տարի յե չենք տեսել:

— Ի՞նչ, մոնչաց կատվից առյուծ գառնալով գեներալը խոժոռ հայացքը խոսողից մյուսների վրա քցելով. լսում եք, դարձավ նա աղյուտանտին. տուն են ուզում գնալ, իսկ ես չեք ուզում, բայց իմկներ, սրիկաներ, ավազակներ:

ԳԵՆԵՐԱԼԸ ԲՈՌԵՆԳՔԸ ՄՈԱԵցը Եց խոսողի քթին։  
Սա քիթը մի կողմը տարավ և շարունակեց։  
—ՄԵՆՔ լսել ենք, վոր այստեղ դեղերտիր-  
ներ շատ կան, թող քիչ ել նրանք ծառայեն, թող  
հիմա ել ծառայեն նրանք, վոր թիկունքում ճարպ  
ու վոսկի յելին դիղում, բեֆ անում, յերբ մենք  
ակոպներում փտում, հոտում ելինք… ՄԵՆՔ տուն  
պիտի գնանք։

—Գնդակահարել սրանց, յես ձեր…

\*  
\* \*

Հապա մի կերեք յերկու բաժին «ջոլմագ»,  
մի բաժին լյուլաքյաբաբ, վրայից ել մի ֆունտ  
ծիրան, դրանից հետո կարող եք մի բան հասկա-  
նալ «Մարքոի Տնտեսական Ռւսմունքի» Յ-րդ հա-  
տորի ֆորմուլաներից։

Մանավանդ յեթե այդ աշխատանքը փորձում  
եք կատարել անզիւական այգու խոտերի մեջ  
պառկած։

Ավելի լավ ե այդ գրքով պաշտպանիր դեմքդ  
յետկեսորյա արևի կծող ճառագայթներից և քնիր։  
Դժվար։

Կողքովդ անցնում ե վորբերի մի խումբ  
վարժուհու առաջնորդությամբ։ Նրանց փորում  
ամերիկական կրուպա յե, աչքերում հիվանդու-  
թյան թախիծ, իսկ վարժուհին մեջքից ծռվել ե,  
վոր փոքրանա և իր իշխ տոտիկները գետնին

խփում «Մեր հայրենիքի» տակտով և իր հրեշ-  
տակային ձայնով յերգել սովորցնում.

«Մեր հայրենիք ազատ անկախ,

Մեր թշնամուց ազատված»։

Փակում ես աչքերդ, սկսում խորհել իմպե-  
րալիզմի, մանդատների, մանկավարժության և այլ  
բարձր նյութերի մասին և հանկարծ մեկը անըս-  
պասելի քնքշությամբ նստում ե փորիդ։

—Կըորաքվես, չե՞։

Այս յերեկո այստեղ ժողով ունենք. Դրա հա-  
մար ենք թափալվում այս խոտերի վրա. գալիս են  
մեկ-մեկ տղերքն այգու զանազան դռներից ու-  
ղասերի փլվածքներից։ Մթնում ե արդեն, բայց  
դեռ 6-7 հոգի յենք։ Ու՞ր յեն մյուսները, ի՞նչ  
յեղավ Ղուկասը։ Սկսում ենք անհանգստանալ։  
Չկա Արմենակը, չկա Աղասին և ուրիշները։

Շտապ մոտենում ե մեզ ընկերներից մեկի-  
յեղբայրը. կանչում մի կողմ Բաբաշկային, փըս-  
փսում են. Բաբաշկան խալթվածի նման բռնում ե  
նրա ձեռքից, պապիրոսը դեն նետում. գալիս ե մեզ  
մոտ.

—Տղերքն ու աղջկերքը բռնված են. Աղա-  
սու մոտ ել ցուցակն ե բռնված։

Ճղեք։

Յրվում ենք տարբեր ուղղություններով։

Վաղում եմ Ղուկասի տունը, վոր զգուշ-  
ցնեմ. Նրա մոտ դեռ թոռւցիկներ կային։

Բայց նա արդեն իր դիմի ճարը տեսել եք։  
Մտա մեր գրասենյակը։ Գրադիր Արմենակին  
մի կողմ քաշեցի ու ասի վոր իսկույն մի վկայա-  
կան պատրաստի ոռւս զինվորի անունով։

Խամ չեր. իսկույն դրատեց։

Մոտո մնացած թոռցիկները տարա թագ-  
ցրի պատշամբի ներքև քարի յետեր, ուր նըս-  
տում ելին դեզերտիրները։

Եգուց պիտի բերեն լցնեն ելի նրանց մեր  
բակը, ձեռները կընկնի, կըկարդան։

Արագ քայլերով անցնում եյի Աստաֆյան  
փողոցով, յերբ ժոտիկից լսվեց մառզերների հա-  
մազարկ, հետո հրացանների. խանութները արագ  
փակվեցին, փողոցն ու բուլվարը մի բոպելի մեջ  
դատարկվեց։

Փախե-փախե։ Լավ եր. ես ել հետները փա-  
խա, մինչև դուրս յեկա Դահիրման-Քուչասի։ Այդ-  
տեղ եր բնակվում բազվեցի ծանոթ մի ձախ դաշ-  
նակցական բանվոր։ Այդտեղ թագնվեցի մի գիշեր  
ու մի ցերեկ։

Ընկերը լուր բերեց. մերոնց բոլորին ել  
մեկիկ-մեկիկ ֆայտոնով յեկել տներից հանել  
տարել յեն կամենդատուրա. ծաղը ու ծանակի  
յենթարկել։ Մեծերից Հասբաթը չեր տարել մա-  
ռզերիստների վիրավորանքները, փոխադա-  
բար վիրավորել ե կամենդատին և մի ապտակ կերել։

Սա իր վրա եր վերցը ել թոռցիկի պատասխանավությունը։ Աղասու մոտից ել իբրև քարտուղարի ցուցակն ելին գտել։ Մրանց յերկուսին բանտ ելին տարել, մյուսներին արձակել։ Փընում ելին Ղուկասին ու ինձ։

ԴԵ, փնտոեցեք։

Առավոտը լույսը չբացված քաղաքից դուրս յեկա դեպի Գետառչայ, այնտեղից Թոխմախան-զեռլը։ Վերջը շուռ տվի դեպի կայարան։

Ասացի մի ապրանքատար վագոնի պլաշառկում կուչ կը զամ, կը զնամ կենինական։ Բոքիկ, ոսավարի բլուզով, շեկ իծի մորուքով, ծոցս ել ոռւս արձակված զինվորի վկայական, ով պիտի ճանաչի կամ ճամբես կտրի յերկաթուղում։

Յես ել մոտեցել ելի կայարանին, տեսնեմ պլատֆորմից ժողովուրդը մաքրում են. դողոացնելով աֆտոմոբիլ կանգնեց. այնտեղից դուրս թռան Շախթունին իր աղյուտանտով, ավտոմոբիլի դուռը պահեցին, յետո դուրս թռավ Խատիսյանը, հետեւից հասավ Փայտոնը, այնտեղից ել պրեմիյերի դեղին չեմոդանները, մեծ ու փոքր, լուրջ ու կոկետ չեմոդաններ լակեյների ձեռքին։

Այս ամբողջ քախումըն ուղղվեց դեպի կանաչ վագոնը։

Պոչդ քաշի, Սպարտակ, քո տեղը չեւ

Խճուղի կա, զոյ տուր վոտներիդ, գնա մինչև բախտի դուռը բացվի։ Ու գնացի։ Շոքը չեր լնկել դեռ, քեփով գնացի։ Իսկ յերբ հոգնեցի ու շոքն ել նեղեց, շուռ տվի թուրքի բոստաններից մեկը։ Չադր եր յերևում, տակն ել սեխի ու ձմերուկի մի շեղ։

Սեխն ու ձմերուկի համը գիտեյի, բայց թուրքերեն, վոչ մի բառ։ Սակայն ես բոստանում բախտս բանեց։ Շապիկ-փոխանով բոստանչին թեպետ թուրք եր, բայց Յերևանի գիմնազիավարտ եր, ոռւսերեն գիտեր։

Յես ել ոռւս զինվոր, վոր տուն եցի վերադառնում, Ռասսեյա։

Յես իմ հայրենիքի հովն ու զովը հիշեցի, նա ասեց, վոր ճիշտ ե, այստեղ շոք ե. յես իմ հայրենիքի ձմերուկների զովքն արեցի, նա իր ձմերուկներից մեկն առաջարկեց, վոր ուտեմ զովանամ։

Վոր ձմերուկի կարմիր սիրտը բացվեց, խոսակցիս սիրտն ել բացվեց։

Դարդ ուներ։

Հեռվից թնդանոթածզության խուլ վորոտն եր հնչում։

Բոյուր-Վեդու կռվի ձայնն եր։

—Ե՞ն, ասացի, յեղբայր, ձեր յերկիրն ել վատ չե, հարուստ յերկիր յե, բայց վոր խաղաղություն չկա, քանի կոպեկ արժե...

— Հա, հա, եղ ասա, ընկեր, մարդ գլուխը  
առնի գնա. ինչքան հայ ընկերներ ունելի, ծա-  
նոթ աղջիկներ, հիմա հետո ել չեն խոսում. իրար  
ենք կոտորում, ինչու Յեվ բոլորը նրանից ե,  
վոր ոռւսը եստեղից գնաց...

Զմերուկը վերջացավ, ծարավս ել հագեցավ.  
ոռւս զինվորը քաղաքականությունից շատ բան  
ե հասկանում, վոր յերկար ու խոր դատողու-  
թյուններ անի քաղաքական խրթին հարցերի  
մասին, են ել ուսում առած գիմնազիստի հետ:

Ռսական մի «սպասիբո», «Աստված գործերիդ  
աջողություն» յեվ պրծավ:

\*  
\* \*

— Դուք եք Զուբարը:

— Զեր խոնարհ ծառան:

— Հետեվեցեք մեզ, պարոն կամենդանու-  
ձեզ կանչում ե:

Մեկն առաջիցս, մյուսը՝ յետեիցս, գնա-  
ցինք կամենդատուրա:

Բոնված ես, բանտ պիտի նստացնեն. հո ան-  
սուշ զրուցի ու քաղցր թելի չեն հրավիրել: Հա-  
շիվդ լավ բոնի ու պարոնների հերն անիծի:

— Պարոն պարուժիկ, բերինք:

Կեպկադ ճակատիցդ յետ զցած, պապիրոսդ  
բերնիդ՝ ներողամիտ ժպիտ շնորհիր քեզ բերող-  
ներին և արհամարհական հայացքդ նետիր պարոն

պարուչիկի պագոններին, հետո ուղիղ աչքերին  
ու պապիրոսդ ծխացնելուց հետո լեզվով բերնիդ  
մյուս կողմը տար ու վեր ցցիր. գլուխս կրտամ,  
յեթե պարոն պարուչիկը չկատաղի:

—Պարոն Զուբար, դուք զինվոր եք:

—Զեզ հայտնի պիտի լինի, պարոն պարուչիկ:

—Ապա ինչու զինվորական համազգեստով

չեք:

—Զեր կառավարությունը չի կարողանում  
հագվեցնել իր բոլոր զինվորներին, պարոն պա-  
րուչիկ:

—Հոեք, պապիրոսը դեն նետեցեք, կեպկան  
ուղբեցեք, ուղիղ կանգնեք:

Գու փոթորիկ, ամպ ու կայծակ:

—Պապիրոսս պըծավ, պարոն պարուչիկ,  
կարող եք հանգստանալ:

—Զեր ազգը, անունը, հոր անունը, տարիքը,  
հայն, ևայն:

Յես իհարկե Սպարտակի անդամ եմ, բայլշեփ-  
կական կազմակերպության գոյություն ունենալ  
չունենալը չգիտեմ, ով է գըել թոռցիկը, նույն-  
պես չգիտեմ, թոռցիկներ կպցըել եմ: Պըծավ,  
ել ուրիշ ցուցմունք չունեմ: Ստորագրում եմ:

—Նստեք այնտեղ, սպասեք կամենդանտի  
կարգադրությանը:

Սպասենք:

Անկյունում մի մեծ ամերիկական մանդատ, այսինքն ներողություն—Ամերիկայից յեկած շորերի մի տյուք ե ընկած։ Այդ շորերը մի ժամանակ քանիքանի մարդկանց համար անհրաժեշտություն են յեղել, հետո բարեգործության միջոց, հետո սպեկուլյացիայի ապրանք, վերջը՝ գոյության իրական ապացույց, իսկ այժմ ել թող ինձ համար բազկաթոռ, մահճակալ ծառայի։

Ամեն մի իր վորքան տարբեր նշանակություններ ե ստանում։

Այ, որինակ իմ շուրջը պտուտ են գալիս սև ատլաս բլուզներով ու սև ատլաս դալիֆեներով բարակիրան յերիտասարդներ։

—Ըսկեր Զուբար, դուք միթե ինձ չեք հիշում Բագվից, յես այնտեղ աշխատում եմի Ավիսի հետ։

Միթոմ իրենք ել բայցնիկ են, սիրտդ բացարանց առաջ։

Վո՞նց չե։

Ճանաչում ենք իրար իսկական եռթյամբ։

Շպիկներ եք, սիրելիներ։

Յեվ յես գերադասում եմ զրպանիցս հանել Մալոյի վեպի «Մի ընտանիքի մասին» ու նրա մեջը խորասուզվել։

Յերեկո եր արդեն, ծառայողները ցըվել ելին, մնացել եր մի պահակ դռան կողքին ցցված։ Յես

արդեն պատրաստվում ելի Ամերկական տյուկը  
մահճակալ դարձնել, յերբ շպորները շրխկացնե-  
լով ներս մտավ Շախաթունին:

—Ախ, դուք այստեղ եք. ինչո՞ւ:

Այս հարցին պատասխանելու տարբեր ձևեր  
կան ի հարկեւ:

—Միթե դուք հիմա մեծամասնական եք, յես  
ձեզ դաշնակցական ելի իմանում:

Այս հարցին շատ վորոշ պատասխան կա:

—Մի ժամանակ դուք ել դերասան ելիք  
պարոն կամենդանու:

Կերածք:

Համով չե՞ր. անցնում ե ներողամիտ տոնի:

—Ախ, յեթե իմանալիք, ձեզ հո հայտնի պի-  
տի լինի, մենք ել սոցիալիստներ ենք, համարյա-  
կոմունիստներ: Բայց դուք շտապում եք—այ-  
տասը տարուց հետո, խնդրեմ անցնենք սոցիա-  
լիզմի պայծառ շենքի կառուցմանը, թե չե հիմա  
այս ավեր յերկրում ի՞նչ սոցիալիզմ, ի՞նչ կոմու-  
նիզմ:

Շախաթունին այնպես եր խոսում, կարծես  
բեմում լիներ, լրւանչակը նայում եր պատուհա-  
նից, սենյակում կիսաստվերներ, ինքը մի հասակ  
առած մարդ, յես՝ ֆանտազիոր յերիտասարդ և ահա-  
նա ձեռքը հայրաբար ծնկներիս խփելով՝ խրա-  
տում ե.

— Տասը տարուց հետո դուք այս յերկրից  
վոչինչ չեք թողնի և... առհասարակ... ավելի  
լավ ե այդ հարցերի մասին այստեղ չվիճենք։ Ինձ  
բանտ եք ուղարկում, այստեղ եք պահում, թե  
ազատում եք—սա ե ինձ հետաքրքիր։

— Դուք շատ ջղային եք. մի ժամից յերեկ  
ձեզ կազատենք։

Գալանտ ժանտարմ ունի դաշնակցությունը։  
Նա գնաց իր յետեկից թողնելով ողբկոյնի  
ու սրիկայության մի խառը հոտ։

Պատուհանից լսվում ե բուլվարի յերաժշտա-  
խմբի նվազածությունը։ Բոտոնգում փոքրիկ  
սեղանների շուրջը հիմա նստոտած են դաշնակ-  
ցական շեֆերը, պաղպաղակ են ուտում ու պոլի-  
տիկուրի զրուցներ անում։

Կամենդատուրայի շենքում խոր լուսթյուն ե.  
մենակ հեռու սենյակից յերբեմն, յերբ յերաժշտու-  
թյունը լուսում ե, ինձ հասնում ե հոգեմաշտըն-  
տընոց։

— Ելի եկավ, եկավ սալդաթի վախտը,  
Տեր Աստվածը քանդի նիկոլի թախտը։

Հետո ուրիշը.

«Երկու կապեկ փող տուր,  
Երկու կապեկ փող տուր,  
Հիվանդանաս, յարո ջան,  
Վրեդ բերեմ դոխտուր։

Հերթապահ զինվորն է, չի ուզում յետ մնալ յերաժշտախմբից և յերգում է իր ռեպերատուարի բոլոր յերգերը:

Հետո իրար հետեւից նույն սենյակից լսվում է հեռախոսի պահանջկոտ ջղալին զանգահարությունը:

Զինվորի սերենադան դադարում է, բայց զանգահարության պատասխանը չեմ լսում:

Միքանի ըռպե անց, փայտի սանդուխները ճրճուացնում են. մեկը արագ բարձրանում է և անցնում հերթապահի սենյակը:

Այնտեղից լսվում է ոռւսերեն բարկացկոտ.

—Վորտեղ ե դեժուոնին... ի՞նչպես թե չկա, ինչու չես պատասխանում հեռախոսի զանգին, յես քո... յես իմ մերը... յես Հայաստանի զինվորական մինիստրոս մի ժամ զանգ եմ տալիս կամենդատուրա և պատասխան չեմ ստանում, սա անառականոց ե:

Բուլվարից անհոգ պապուրին ե լսվում, աղգալին մարշ, ծիծեռնակ, աղջի բախտավոր...

Զինվորական մինիստրը շարունակելով իր հայնոյանքը, իջնում ե սանդուխքից:

Կես զիշերի մոտ եր, յերբ հաճեցին ինձ բանան ուղարկել:

—Առաջընկիր, հրամայեց պահակը (կանվոյ) հրացանը ստուգելով:

Ալդ ըռպելից նա իմ գլխի տերն եր:  
Գնում ելինք:

—Վոր բանտն ես տանելու, ընկեր:  
Լոռվթյուն:

Գնում ենք:

—Ընկեր, դու վոր առեստովանի յես տանում,  
սկի մտածում ես թե ում ես տանում, ինչու յեն  
դրան դուզաղ զցում:

—Զակոն չի:

—Ի՞նչը զակոն չի:

—Խոսալը:

—Բա խոսում ես...

—Ասում եմ քեզ զանկոն չի:

Գլխիս տերը բարկանում ե: Լոենք:

Բայց ճանապարհը յերկար ե կանվոյի հետ-  
խոսելը «զակոն չի»:

Հո ինքս ինձ կարող եմ խոսել.

—Եդ ա ելի, վոր զակոն չի. գլխիդ խփեն  
սալդաթ տանեն, մի խոսա, զակոն չի. դալը պատ-  
րոններով դուշմանի դեմ հանեն կոտորեն, սուս  
արա, զակոն չի. Սալդաթի ոջաղի ծուխը կտրվի,  
խմբապետն ու զորքեն զանգինան, մի խոսա,  
զակոն չի. զորքեն խաբի, կաշիդ քերթի, հողդ  
զավթի, սուսարա... Ե՞տ ա զակոնը. ես կառավա-  
րությունը սաղ յերկիրը վերան դարձնի, Ե՞ս ա  
զակոնը, բայց եվիկը ժողովրդի աչքը բաց անի,  
բայց եվիկին դուզախ զցեն, ձեռ ու վոտը կապեն,  
Ե՞ս ա զակոնը...

Մութը տեղը. զակոնը փաս:

— Են որը մի թուղթ ելին կարդում մեր ոռտի տղերքը, քո ասածն եր ասում են թուղթն ել։  
Իսկ վոր զանգինին հայշ-հայ, ոաշպարին  
վայ-վայ։

— Են թուղթը յես եմ զցել ձեր ոռտը...  
— Յա...»

«— Յա»— զարմանք։

«— Յա»— ուրախություն։

Եղ «Յան» եր, վոր անտեր զակոնի իզն ու  
թողը կորցրեց։

Քաղզրագիտությունը վոտի վրա։

— Լավ ես ասում, համա կըլինի՞ քո ասածը։

— Կըլինի յեթե զեներալների, խմբապետների, մինիստրների հախիցը զանք, վոնց վոր մեր  
ոռւս ախպերներն արին։

— Ախը ինչ յեղան մեր շեկ ախպերները, յես  
նրանց ուշունցին մատաղ, են գնալն եր վոր  
գնացին, սկի ել խաբար չեն տալիս։

Հանթարից մինչև բանտի փողոցի անկյուն  
հասնելը ես հարցի պատասխանն ել տվի։

— Ե՞ն, ընկեր ջան, մուրազդ կատարվի, մնաս  
բարով, ասեց իմ կանվոյը։ Դա վերջին ընկերական  
խոսքն եր, Բանտի պատի տակ շրջում եր  
պահակը։

«Զակոնը» յեկավ նորից կանգնեց իմ ու իմ  
գլխի տիրոջ միջև, բաժանեց իրարից։

Բայց միթե այդ զինվորի սրտում մի կոմբջիջ  
չսաղմնավորվեց այդ գիշեր։

Հինգ ըոսկե չանցած իմ անունս մտավ բան-  
տարկալների գրքի մեջ:

— Ինչու համար եք ձերբակայված:

Հերթապահը մի զարմացած հայացք եւ զցում  
վոտիցս գլուխ:

Բոտ յերեսութին անսպասելի հյուր եր բայ-  
շեկ կալանավորն այս բանսում և յես առաջինն  
ելի վոր խախտում ելի նրա քաղաքական կու-  
սությունը:

Քաղաքականների կամերա չունելին, ուղար-  
կեցին քրեականների բաժանմունքը:

Դոնապահը մութ բակով ինձ առաջնորդում  
ե դեպի կամերան: Յերկար չըշխկացնում ե բա-  
սալիների կապոցը, քննատ մրթմրթացնում, վեր-  
ջապես բաց ե անում դուռը:

Կամերայում մութ ե. աչքդ ծակեն, չես տես-  
նի: Դուռն արդեն կողպված ե վրայիցս, ու յես  
չեմ իմանում վոր կողմը զնամ:

Իմ անժամանակ գալուստս վոչ վոքի չղար-  
թեցրեց: Խոմփոցի անհարդար կոնցերտ եր շուր-  
ջը, ծանր ոդ: Միքիչ առաջ զնալով զգացի վոր  
հատակին մարդիկ են քնած: Կոացա, շոշափեցին  
կավ եր չշոշափելի:

Զեռքիս տակից մեկը վեր թռավ, գլուխը  
ճակատիս խփեց ու պանիկորեն բղավեց.

— Աման, խեղդում են, ու ոձիքս ճանկեց:  
Յես նրա մազերից:

Ու քաշ ելինք տալիս իրար: Քնածները զար-

թեցին. վորտեղից-վորտեղ մոմ վառեցին ու շրջապատեցին մեզ:

Զարթածների համար անսպասելի ներկայում:

Մեր քաշքոտոցը նրանց զվարճացնում եր:  
—Տնւր, դփիր, նրանց համար միենույնն եր,  
թե ով ում և ինչու դփի:

Զարությունս գնալով աճում եր. չարանում  
ելի և ինձ վրա և հիմար դրության վրա և այս  
ամեն անծանոթ տիպերի:

Բավական ե:

Հետ հրեցի անծանոթ հակառակորդիս և բարկացած դիմեցի բոլորին և վոչ մեկին.

—Տեղ տվեք քնելու:  
—Վոնց չե, աղա ջան: Ելի հրհոց:  
—Այ տղա, դու ով ես. վորտեղից եկար, քեզ  
ինչու են ես՝ ծակը կոխել:

Խոսողը բարձրահասակ թիկնեղ, խիտ մազերը  
ճակատին խոնված մի բանտարկյալ եր. նա, վոր  
մոմ վառեց:

Նրա խոսքի վրա բոլորը լոեցին:  
Զեղինչ թե ինչու եմ բոնված: Թե կուզեք՝  
բայլշիկ եմ:

—Ուռուա, մեզ մոտ բայլշիկ են բերել:  
—«Կեցցե բայլշիկը. մենք հիմա նրանց ցույց  
կըտանք...»

Այնովիսի խելազար ուռաներ, վոր շմեցի:  
—Խուժան, սուս արեք. ի՞նչ զալմաղալ ա կես  
դիշերին: Բանտապետին իմաց կըտամ:  
Պահապանն եր:

— Գնա, քունն ել, բանտապետինն ել, զիշերվա գել...

Յես վոչ մի տրամադրություն չունելի ըռպեյական քաղաքական նվաճում կատարել քրեական հանցավորների այս վորջում։

Կրկնեցի իմ խնդիրը, վոր քնելու տեղ տան։ Բարձրահասակը իր ընկերոջ հետ պառկեց սեղանին և ցույց տվեց իրենց վոտների տակ ազատ մնացած տարածությունը։ Սեղանի լայնությամբ մի արշին տեղ։

Կծվեցի ու խիզախ փորձ արի քնելու։

Անհարմար դրությունից անդամներա թմրում ելին. Արևելյան կողմից փչում եր հյուրնկալներիս վոտերի բուրմունքը, հարավային կողմից բաց պատուհանից արտաքնոցի գարշահոտությունը։

Ակրոբատիզմի մի քանի անհաջող փորձեր ել արի՝ մարմնիս տանելի դիրք տալու համար և հուսահատ իջա գահույքից։

Ելի շոշափելով գտա մի բանտարկյալ հատակի վրա. գլուխս դրի նրա բարձի ազատ տեղըն ու գլուխս գլխին կպցրած ընեցի։

Առավոտյան աչքս կիսաբաց, կես արթուն շուրջս դիտեցի. իւ ակամա հյուրընկալս արդեն վեր եր կացել և շեշտակի նայում եր ինձ։

Հեծ բարեկամական հայացք չեր։

Ինչու բարեկամական պիտի լինի վոր. ան կոչ, գիշերով մարդու գոզը մտել քնել եմ,

Բայց չե. մի ինչ-վոր ուրիշ բան ե ասում նրա հայացքը։

Ընդ:

Այս գանգուր մազերովը այն վանեցի յերիտասարդ դեղերտիրն է, վորին պապի հրամանով մի շաբաթ առաջ բանտ ելի ուղարկել:

Հիմի հասկանում եք, ինչպես եր նայում ինձ:

Յերեք թե չորս որ նստեցի յես բանտում:

Այդ կարճ ժամանակամիջոցում հնարավոր չեր մոտիկ ծանոթություններ կապել: Շուրջս քրեական տիպեր ելին:

Ամեն առավոտ մի ժամով մեզ հանում ելին բակ ող շնչելու: Այդտեղ տեսնում ելի և բանտարկված պարոնակք ոֆիցերներին. սրանք ել քրեական ելին, բայց ինչպիսի արհամարհանքով վերից վար ելին նայում մեր կամերայի քրեականներին:

Դաշնակցական ժանդարմները հոգ ելին տանում բանտարկյանների առողջության մասին. ստիպում ելին քառորդ ժամ ազատ շարժումներանել:

Դա լոկ ձեւականություն եր. թե մարզանքի դեկավարը (բանտարկյալ եր նույնպես), թե բանտարկյանները, դա համարում ելին բանտային ոեժիմի պարտադրություն:

Մեր կամերայի դիմացի կամերայում բանտարկված ելին նազախեցի գյուղացիք. այնտեղից վոչ մի ձայն չեր գալիս, մինչդեռ մեզ մոտ ամբողջ որն աղմուկ եր:

Մի անգամ այդ խորհրդավոր կամերայի վանդակապատ աչքից ներս նայեցի:

Մի յերկու տասնյակ գյուղացիք՝ վոմանք փոքի վրա, վոմանք մեջքի ընկած ելին մերկ քարեհատակին:

կովում եր անքոց:

Մի որ բակում մոտեցա նըանցից մեկին,  
հարցուփորձ արի, թե ինչու են բռնված:

— Զամուն ելինք:

Յեզ չելին իմանում, թե մինչև յերբ պիտի  
փուեն այստեղ, վոչ մի քննություն չեր կատար-  
վել նըանց գործով:

Ղազախեցու խնդրով միքանի դիմումներ  
զբեցի պատշաճ մարմիններին:

Բանտապետի քիթը հոտ առավ և նա արգե-  
լեց իմ տեսակցությունները ղազախեցոց հետ:

Բայց կամերաները մտնելիս ու գուրս գա-  
լիս միջանցքից մինչև բակ հնարավորություն ու-  
նելի զամուններին խոսք տալ, առնել:

Նըանք արգեն գիտելին ով եմ, գիտելին թե  
կա կարմիր Ռուսաստան, կարմիր բանակ:

Բանտարկությանս չորրորդ որը ինձ կանչեցին  
բանտապետի մոտ ու հայտնեցին վոր յես ազատ եմ:


Բոլորը բակումն ելին:


Մնաս բարով ասացի ղազախեցիններիս և ուղ-  
ղվեցի դեպի ազատության գուռը:

Զորս-հինգ հոգի ղազախեցի մինչև դուռը յե-  
կան հետս:

— Ասա՞ շուտ գան, ել հալ չմնաց մեր ջա-  
նումը: Ամենայերիտասարդ ղազախեցին եր:

Կամացուկ եր ասում, կարծես ինքն իրան  
խոսում, վոր բանտի դռնապահը շոխ:





9/4 1-9

9-8

ԳԻՆԵ Ե 3-ԿՈՊ.

15

ՄԵԿ  
օրինա

100m 2  
00







(254)

ԳԱԱ Հիմնարար գիտ. օրադ.



FL0043264

